

## Բուհում անձի բարոյական որակների ձևավորման տեխնոլոգիան

*Բաղդասարյան Լիլիթ  
Մակարյան Ալվարդ*

**Հանգուցային բառեր.** բարոյական գիտակցություն, բարոյական գործունեություն, բարոյական հարաբերություններ, բարոյական արժեքներ, բարոյական կուլտուրա, տեխնոլոգիական քայլաշար

Կրթական բարեփոխումների անհրաժեշտությունից ելնելով՝ արդիահունչ է դարձել բուհում անձի բարոյական որակների ձևավորման խնդիրը:

Հասարակության զարգացման բոլոր փուլերում էլ անձի բարոյական որակների ձևավորման հարցն առաջնային և կարևոր է եղել: Մարդ արարածի ձևավորմանը զուգընթաց ծնունդ է առել նաև դաստիարակությունը, և մարդ-մարդ փոխհարաբերություններում առաջին հերթին կարևորվել է բարոյական դաստիարակությունը: Բարոյական արժեքների իմաստավորումը միշտ էլ հուզել է մարդկությանը: Փորձել են այս կամ այն երևույթներին, դրսևորումներին գնահատական տալ և կարևորել իրենց ձեռքբերումները՝ գիտելիքները փոխանցելով մատաղ սերնդին: Հասարակության զարգացմանը զուգընթաց բարոյականության մասին պատկերացումները, արժեքները փոփոխության են ենթարկվել: Մակայն կան գիտական պնդումներ, որոնք բոլոր ժամանակներում էլ եղել են արժևորված: Ահավասիկ.

- ա) բարոյականությունը հասարակական գիտակցության ձև է, նորմերի, սկզբունքների համակցություն, որոնցով մարդիկ առաջնորդվում են իրենց վարքում՝ հիմնվելով ավանդույթների և հասարակական կարծիքի վրա,
- բ) բարոյականությունը մարդկանց պատմականորեն ձևավորված վարքի սկզբունքների, նորմերի, կանոնների ամբողջությունն է,
- գ) բարոյականությունը հասարակական գիտակցության ձև է, հասարակական հաստատություն, որը կատարում է մարդկանց վարքի կարգավորման գործառույթ [2, 71],
- դ) բարոյականությունը որպես արժեքային-նորմավորող համակարգ է, որը հանդես է գալիս հասարակական հարաբերությունները կարգավորողի և անձի ինքնահաստատման եղանակի դերում [6, 8]:

Քանի որ մարդու դաստիարակությունն անընդհատ գործընթաց է, ուստի անհրաժեշտ է ընդգծել նաև անձի պատանեկության շրջանում իրականացվող բարոյական որակների ձևավորման խնդիրը: Անձը, տարիքային մի փուլից մյուսին անցնելուն զուգընթաց, կյանքն ու մարդկային հարաբերություններն անընդհատ վերաբժկորում է, իմաստավորում:

Ընդունում ենք բարոյականության ներքոհիշյալ կառուցվածքային տարրերը.

- բարոյական գիտակցություն,
- բարոյական գործունեություն,
- բարոյական հարաբերություններ,

- բարոյական արժեքներ [1, 12]:

Բարոյական պահանջների հասարակական իմաստի ըմբռնման հիման վրա բարոյական գիտակցությունն օգնում է մարդուն գիտակցելու իր վարքագիծը:

Գիտական գրականության մեջ առանձնացվում են բարոյական գիտակցության հետևյալ տարրերը՝ բարոյական պատկերացումներ, հասկացություններ, զգացումներ, համոզումներ, սկզբունքներ, նորմեր, հայացքներ, իդեալներ, բարոյական սովորույթներ, ավանդույթներ, կատեգորիաներ, բարոյագիտական գիտելիքներ: Մարդ-անհատի զարգացմանը զուգընթաց փոխվում են բարոյական պատկերացումները, համոզումները, զգացումները, հայացքները, իդեալները, բարոյական սովորույթներն ու ավանդույթները, բարոյագիտական գիտելիքները, հետևաբար փոխվում է նաև բարոյական գիտակցությունը: Փոխադրկապակցված հարաբերությամբ՝ ուսանողի բարոյական որակների ձևավորման տեխնոլոգիական քայլաշարը հենվում է բարոյական գիտակցության կառուցվածքային տարրերի վրա, քանի որ բարոյական գիտակցությունը ղեկավարում է բարոյական գործունեությունը, բարոյական հարաբերությունները՝ առանձնացնելով բարոյական արժեքներ:

Հաջորդ տարրն է բարոյական գործունեությունը: Այն ունի նպատակ, դրդապատճառ, բովանդակություն, եղանակ, արդյունք:

Բարոյական գործունեության ընթացքում մարդիկ մտնում են բազմաթիվ բարոյական հարաբերությունների մեջ, որոնք էլ կարգավորվում են բարոյական գիտակցության միջոցով:

Բարոյական հարաբերություններն ունեն նաև գաղափարական, տեսական կողմ, որին վերաբերում են բարոյական նպատակները, գաղափարները, բարոյական արժեքներն ու նորմերը [7]:

Այս կապակցությամբ պետք է ավելացնել, որ բարոյականության էությունն առավել կոնկրետ ու ցայտուն դրսևորվում է նրա գործառույթներում: Գիտական գրականության մեջ զանազանվում են բարոյականության մի շարք գործառույթներ՝ կարգավորող, կրթական-դաստիարակչական, իմացական, գնահատողական, վերահսկող, արժեքային-կողմնորոշող, հաղորդակցման, կանխատեսման:

Բարոյականության հիմնական գործառույթը կարգավորող գործառույթ է, որին ենթակա է իմացական գործառույթը: Հենց բարոյականությանն է պատկանում մարդու, այլ մարդկանց, ընտանիքի, ազգի, ժողովրդի, ողջ հասարակության նկատմամբ հարաբերությունների կարգավորման գործիքը:

Բարոյականության իմացական գործառույթը դրսևորվում է նրանում, որ բարոյականությունն արտացոլում է յուրահատուկ սոցիալական օբյեկտ՝ մարդկանց փոխհարաբերությունները, որոնք առարկայանում են անմիջականորեն, հասարակական նշանակություն ունեցող հաղորդակցման միջոցով [3, 24]:

Բարոյականությունը կատարում է կրթական-դաստիարակչական գործառույթ, որի բովանդակությունը կազմում է բարոյական արժեքների, նորմերի, դիրքորոշումների՝ կազմակերպված, նպատակամետ, սիստեմատիկ, հետևողական տարածումը մարդկանց մեջ բարոյական լուսավորության միջոցով [5, 76]: Կրթական-դաստիարակչական գործառույթի նպատակն է ձևավորել բարձր բարոյական կուլտուրա, բարոյական արժեքներ, բարձրացնել պատրաստվածության մա-


կարդակը և կոփել կամք:

Բարոյականությունը կատարում է արժեքային-կողմնորոշող գործառույթ, որի նպատակն է ոչ միայն ճանաչել բարոյական արժեքները, կարգավորել մարդու վարքագիծը համամարդկային բարոյական նորմերին համապատասխան [4, 81], այլև վերափոխել մարդու բարոյական կողմնորոշումները և դիրքորոշումները, ոգեշնչել և մղել կոնկրետ բարոյական գործողությունների:

Բարոյականության բոլոր գործառույթները գործում են համակցության մեջ:

Վերը ասվածից պարզ է դառնում, որ բուհում անձի բարոյական որակների ձևավորման տեխնոլոգիայի բովանդակությունը կախված է ոչ միայն բարոյականության կառուցվածքային տարրերից, այլ նաև բարոյականության գործառույթներից: Փոխշտրկապակցված հարաբերությամբ հարկ է նշել, որ բարոյական որակներ ձևավորելիս առնչվում ենք նաև վարքային դրսևորումներին՝ վարվելակերպին, ուստի էթիկական կատեգորիաների իմաստավորումն ու յուրացումը նույնպես խիստ անհրաժեշտություն է: Պատանեկության տարիքում առավել կարևոր է բարու և չարի, կյանքի իմաստի, երջանկության, պարտքի և պատասխանատվության, արժանապատվության, խղճի, արդարացիության իմաստավորումը:

Ներկայացնենք բուհում անձի բարոյական որակների ձևավորման տեխնոլոգիայի սխեմատիկ պատկերը.



Անհրաժեշտ է նախ ախտորոշել ուսանողի բարոյական գիտակցությունը պարզելու համար, թե տարիների ընթացքում որքանով են ձևավորվել այս կամ այն բարոյական որակները, արդյոք կան սխալ բարոյական պատկերացումներ ու համոզմունքներ, որքանով է սեփականացրել բարոյական սովորույթներն ու ավանդույթները, բարոյագիտական գիտելիքները: Ախտորոշման գործընթացի նպատակն ախտանիշն է, այսինքն եզակիի և ընդհանուրի համընկման փաստի բացահայտումը: Ախտորոշումն ունի վերափոխական էություն, որն առաջին հերթին դրսևորվում է այն ժամանակ, երբ բարոյական գիտակցությունը դասակարգվում է բարոյական պատկերացումների, բարոյական համոզմունքների, բարոյական սովորույթների ու ավանդույթների, բարոյագիտական գիտելիքների շարքում, ձևավորվում է համակարգ՝ արտահայտելով ներքին փոխկապակցվածությունը և հարաբերությունը պրակտիկայի հետ, երկրորդ՝ պրակտիկ գործունեության ժամանակ բարոյական գիտակցության ախտորոշման ընթացքում արդեն այն ենթարկվում է վերափոխման, երրորդ՝ արդեն բարոյական գիտակցության ախտորոշման գործընթացի փուլում ներկայացվում են վերակառուցման շատ ուղիներ և ուղղություններ, որոնք հետագայում ճշտվում են, կոնկրետացվում նպատակային կողմնորոշման փուլում: Ախտանիշի ստացումը հանդիսանում է մուտքային արդյունք բարոյական գիտակցության ախտորոշման գործընթացի գնահատման համար: Այս՝ որակաչափման փուլում գնահատում և չափում ենք անհատական բարոյական գիտակցությունը, համեմատում հասարակական բարոյական գիտակցության հետ, այնուհետև անցնում կանխատեսման փուլին: Այս փուլում որոշվում է և ուրվագծվում անելիքների հեռանկարը: Ցանկացած կանխատեսում նախատեսում է բարոյական գիտակցության ձևավորման հեռանկարի առնվազն երեք տարբերակ: Ամեն մի հեռանկար տարբերվում է իր իրականացմամբ: Կանխատեսման տարբերակների ստացումը հանդիսանում է մուտքային տեղեկատվություն կոնկրետ մոդելի մշակման համար: Այս՝ մոդելավորման փուլն է, երբ կառուցվում և ստեղծվում է մտածական մոդելը: Մոդելավորման ժամանակ անչափ կարևոր են մոդելավորողի կառուցողական, ակադեմիական, ստեղծագործական կարողությունները: Այս փուլի արդյունքը մուտքային է նախագծման համար: Նախագիծը տեքստային արտահայտություն է, հաշվարկի, գծագրի և այլ ձևերի տեսքով նշանային համակարգ, որտեղ նշվում են դերեր, գործառույթներ, նպատակներ, կողմնորոշման արժեքներ: Ստացված նախագիծը մուտքային արդյունք է ծրագրման փուլի համար: Ծրագիրը հաջորդական գործողությունների ամբողջություն է, նպատակների կամ ենթանպատակների իրականացման միջոցառումների համալիր՝ վերածվելով նպատակների «ծառի»: Ծրագրի էությունն է նպատակների և գործունեության բովանդակության մանրակրկիտ նկարագրությունը, ինչպես նաև բարոյական գիտակցության վերափոխման նախագծերի իրականացման միջոցառումների և դրան հասնելու անհրաժեշտ ռեսուրսների բնութագրումը: Ընդ որում ծրագրում արտացոլվում են միջոցառումները, որոնք կապված են նախագծի ամեն մի բաժնի նպատակներին հասնելու հետ՝ տեսական, տեղեկատվագիտական, նորմատիվ, բովանդակային, չափորոշիչային: Հաջորդ փուլը պլանավորումն է: Պլանի մշակումն իրենից ներկայացնում է նախօրոք կազմված կարգ, որևէ ծրագրի իրականացման աշխատանքների հաջորդա-

կանություն, միջոցառումների անցկացում: Ծրագրի նպատակների և բարոյական խնդիրների բնույթից պլանը կարող է ունենալ տարբեր բաժիններ: Յուրաքանչյուր բաժնի մեջ առանձնանում են հստակ դիրքորոշումներ՝ նպատակներ, խնդիրներ, ուղիներ, ուղղություններ, միջոցներ և մեթոդներ, միջոցառումներ, ժամանակավոր ցուցանիշներ, պաշտոնական անձինք, որոնք պատասխանատու են դրանց իրականացման համար, անհրաժեշտ ռեսուրսներ (կուլթական, ֆինանսական, կադրային, գիտական, կրթական, մեթոդական և այլն): Պլանում նկարագրվում են նպատակները, այդ նպատակներին հասնելու միջոցառումները, ղեկավարման, ձևավորման և կառավարման գործառնությունները, կատարողական գործառնությունները, միջոցառումների իրագործման ժամկետները և այլն: Հաջորդիվ իրականացման փուլն է, երբ ակնհայտ երևում են և գնահատվում նախորդ փուլերի արդյունքը, ինչպես նաև դասախոսների պրոֆեսիոնալ կարողությունները: Տեխնոլոգիայի յուրաքանչյուր քայլն իրականացնելիս կարևոր է տեղեկատվության ապահովումը: Յուրաքանչյուր փուլի լիարժեքությունն ապահովելու համար այն կառավարվում է, և իրականացվում նորարարական գործընթաց: Յուրաքանչյուր փուլի լիարժեքությունից է կախված հաջորդ փուլի հաջողությունը: Փուլերի արդյունքը ստուգվում է պրակտիկ մակարդակում՝ բարոյական գործունեությունն ու բարոյական հարաբերություններն ախտորոշելով: Առանձնակի կարևորություն կա մատնանշելու կանխատեսման փուլը, երբ ուրվագծվում են հետագա անելիքները: Բուհում կարելի է իրականացնել ամենօրյա տարբեր միջոցառումներ ուսանողների բարոյական կուլտուրան բարձրացնելու նպատակով: Կարելի է մշակել ներբուհական էթիկայի և էթիկետի կանոններ և խստորեն հետևել դրանց՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն վարվելակերպին, այլ նաև արտաքին տեսքին: Կանխատեսման և մոդելավորման փուլերում անհրաժեշտ է կարևորել բարոյախրատական թեմաներով զրույցների, սեմինարների, բանավեճ-դեբատների, կոնֆերանսների ընդգրկումը:

Այսպիսով, բուհում անձի բարոյական որակների ձևավորման տեխնոլոգիայի իրականացումն անհրաժեշտություն է երիտասարդության բարոյական կուլտուրան բարձրացնելու, բարոյական գիտակցությունը զարգացնելու համար:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բայան Ա., Մաղյան Շ.*, Մանկավարժական էթիկա, Երևան, 2001թ., 207 էջ:
2. Բարոյագիտական բառարան, Երևան, 1985 թ, 200 էջ:
3. *Анисимов С. Ф.*, Мораль и поведение, М., Мысль, 1985г.-155 с.
4. *Дробницкий О.Г.*, Проблемы нравственности, Наука, М., 1977г.-334 с.
5. *Крутов Н.Н.*, Мораль в действии, М., 1977г.- 255с.
6. *Шишкин А. Ф.*, Человеческая природа и нравственность, Мысль, М., 1979 г.- 286 с.
7. *Щербак Ф. Н.*, Мораль как духовно-практическое отношение, Л., 1986 г.- 176 с.

## Технология формирования нравственных качеств личности в вузе

*Багдасарян Лилит  
Макарян Алвард*

### Резюме

**Ключевые слова:** *нравственное сознание, нравственная деятельность, нравственные отношения, нравственные ценности, нравственная культура, технологические шаги*

В статье обсуждается необходимость формирования нравственных качеств и развития нравственного сознания юношей и девушек. На всех этапах развития общества вопрос формирования нравственных качеств личности был приоритетным и важным. Воспитание человека – это непрерывный процесс, поэтому необходимо также подчеркнуть необходимость формирования нравственных качеств личности в юношеском возрасте. Наряду с развитием человека-личности, меняются моральные представления, убеждения, чувства, взгляды, идеалы, нравственные привычки и традиции, моральные знания, следовательно, меняется и нравственное сознание. Важность формирования системы нравственных ценностей студентов обусловлена значимостью регулирования и балансирования общественных отношений.

Безусловно проблеме придают большое значение и в вузе, поэтому в данной статье предлагается технология развития нравственных качеств личности в вузе, что поспособствует повышению нравственной культуры студентов. В работе детализируется поэтапная последовательность технологических шагов, подчеркивается стадия предусматривания, в ходе которой мы придаем важное значение разработке внутриуниверситетских правил этики, предусматриванию бесед, семинаров, дискуссий-дебатов, конференций и повседневных мероприятий на нравственные темы.

Мы считаем, что обсуждаемая проблема актуальна, и необходимо, чтобы она была в центре внимания соответствующих специалистов.

## **The Technology of Developing the Individual's Moral Qualities in Higher Educational Institution**

*Baghdasaryan Lilit  
Makaryan Alvard*

### **Summary**

**Key words:** *moral consciousness, moral activity, moral relations, moral values, moral culture, technological steps*

The article discusses the need of developing teenagers' moral qualities and moral consciousness. The issue of developing individual's moral quality was a matter of priority and importance at all stages of societal development. Human education is a continuous process, so emphasizing the need of developing individual's moral qualities in his youth is significant. Along with human-individual's development, moral perceptions, beliefs, feelings, attitudes, ideals, moral customs and traditions, ethical knowledge change, and consequently changes moral consciousness. The importance of developing teenager's system of moral values is conditioned by the significance of regulation and balancing of public relations.

Of course, great importance is given to the problem in Higher Educational Institutions, so this article proposes to implement the technology of developing individual's moral qualities in the university, aimed to increase students' moral culture. In the work it is presented the sequence of technological steps in detail, emphasizing the stage of provision, during which the importance of developing intra-university rules of ethics, the provision of conversations, the seminars, the discussions-debates, the conferences and the daily activities on moral topics are highlighted.

We believe that the discussed issue is up-to-date and essential to be in the spotlight of relevant professionals.